

5.3.4 Չանգվածային-բացատրական միջոցառումներ

Մարդահամարի անցկացումը պահանջում է բնակչության շրջանում լայն բացատրական աշխատանք՝ մարդահամարի նպատակների, խնդիրների, անցկացման կարգի, ժամկետների մասին: Այն նպատակային դարձնելու համար կազմվեց մարդահամարի զանգվածային-բացատրական աշխատանքների ծրագիր: Մարդահամարի նախապատրաստման և անցկացման գործառնությունների մասին բնակչությանը պարբերաբար տեղեկացվում էր ինչպես մամուլով, այնպես էլ հեռուստահաղորդումներով: Բնակչությանը տեղեկացվեց նաև, որ ԼՂՀ-ում մարդահամարի անցկացման գործընթացները կանոնակարգվում են «Մարդահամարի մասին» ԼՂՀ օրենքով, ինչով սահմանված է նաև բնակչության անհատական տեղեկատվության գաղտնիության պահպանման պահանջը, ինչպես նաև քաղաքացիների իրավունքներն ու պարտականությունները:

Բնակչությանը մարդահամարի մասին իրազեկելու նպատակով Ստեփանակերտ քաղաքում և հանրապետության քաղաքներում տեղադրվեցին գովազդային վահանակներ:

Տպագրվեցին և բաշխվեցին ԼՂՀ 2015թ. մարդահամարը լուսաբանող պաստառներ:

Թվարկված զանգվածային-բացատրական և իրազեկման միջոցառումների արդյունքում ապահովվեց բնակչության ակտիվ ու բարյացակամ մասնակցությունը մարդահամարին: